№ 5—ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 5

1895 ՅՈՒՆՎԱՐ 13 (25) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենտրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ". կամ Tiflis, Rédaction „Ardzagang."

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

,,ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելիամինովսկի փ. ոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ։

Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Арцаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ԱՂԷՔՍԱՆԴՐ և ՍՕՖԻԱ ՍՈՒՐԷՆԵԱՆՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին իրենց սիրելի մօր

ԵՒՓԻՄԷ ՍԱՐԳՍԵԱՆ ՍՈՒՐԷՆԵԱՆԻ

մահը։ Իւրաքանչիւր երեկոյ 7 ժամին կը կատարուի ամբիծք, իսկ յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ ամսոյս 15-ին առաւօտեան 18 ժամին իւր բնակարանից, Միքայէլեան փողոց, Կուկիոյ Հայոց Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու հանդէպ, դէպի Վանաց աւագ եկեղեցին։ (2-1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնաշխատ յառաջդիմութիւն.
Հայկական սպանութիւններ.
Կ. Պոլիս բերուած կալանաւորներ։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան տօնը։ Լօրդ Կիմբերլէի գրութիւնը։ Ռուսաց լրագրերի հաղորդածները։ Հայկական քննիչ մասնաժողովի նախագահի վերադարձը Կ. Պոլիս։ Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան։ Բագուի գործարանատէրերի բողոքը։ Բաժնումից։ Ղզլարի ճգնաժամը։ Գիւղատնտեսական ընկերութիւն Երևանում։ Թիֆլ. 2-րդ գիմնազիայի նոր շինութեան օրհնութիւնը։ Դօկտոր Ռուխ Նուէլը Թիֆլիզ քաղաքին։ «Մոռացուած աշխարհ»։ Պետերբուրգից։ Մուսին Պուշկինի վերադարձը Պետերբուրգ։ Ղարսից։
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ. — Նամակ Մուշից։
ԸՆԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — Նամակ Կարսից։
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երգինա
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՆՔՆԱՇԽԱՏ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

Ինքնաշխատութիւն՝ մարդոյն բնական պարտիք և արդար քրտինքն է, իւր կեանք պահող ամենէն առաւել պտղաբեր յոյսն է։ Անիբաւ է մարդ, թէ ուրիշի քրտանց ու ձեռաց հացին սպասէ. «Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ և բարի եղիցի», կը խրատէ Դաւիթ։

Աշխարհիս վերայ ո և իցէ մի ազգ և ժողովուրդ, իւր կեանք պահող, տնտեսող ու բարուոքող քրտնաջան մշակն է, իւր արտ վարող մաճկալն է, իւր սերմ ցանող ու հնձող ինքնավարձ աշխատաւորն է, իւր գրախտն ու դարաստանն տնկագործող պարտիզպանն է, իւր տուն շինող ճարտարապետն է։ Իւր ընտանեկան կեանքին պէտքերն հոգացող հայր ու տնտեսն է, իւր հաց ու սեղան պատրաստող մատակարար ձեռքն է, իւր արուեստ հնարող հանճարին աղբիւրն է, իւր գործարանին մեքենաները դարձնող մղիչ շոգին է, իւր անձին մերկութիւնը պատսպարելու կտաւագործն է. իւր ամէն շահավաճառութեան վաճառական և խանութպանն է, իւր գրպանը շէնող ու կարգադրող իւր ընկերական հանգստութիւնն է, իւր մանուկներ գրկող դաստիարակն է, իւր ներկային մէջ գործող ձեռքն և ապագային մէջ նախատեսող աչքն է. վերջապէս ժողովուրդին ինքնաշխատութիւն ամենայն ինչ է այս աշխարհիս վրայ իւր առանձին յառաջադիմութեան համար։

Պէտք է խելամուտ ու ճանչնայ ժողովուրդ թէ՝ իւր կեանքն արդիւնաւորողն՝ միմիայն իւր ինքնաշխատութեան ձեռքն է, և գլուխ որչափ զօրաւոր և որչափ շահաբեր է։ Մի ազգ և ժողովուրդ՝ եթէ իւր կեանք և բախտ ուրիշէ կ'ակնկալէ, շատ բնական և յայտնի է թէ՝ իբրև երազայոյս պահ մի գիշերուան ծանր քունին մէջ կը խայտայ և առաւօտ ոչ ինչ կը գտնէ։

Մշակ ժողովուրդին անժխտելի ու բնական պարտիքն է, որ իւր հացն ինքնին հոգայ, իւր արտն ինքն քաղէ. ապա թէ ոչ՝ արտն առանց քաղելու կը մնայ. կը կծղի ու կը թօթափին ցորենհատեր, եթէ նա դրացուոյն կամ բարեկամին սպասէ։

Այս ճշմարտութիւն իմ կեանքիս մէջ փորձով ճանչցած եմ. դու որ դեռ անփորձ ես, ուշ դիր, ես մի հնոց առակով պատմեմ քեզ։

Արտոյտ թռչունն՝ որ թերևս արտ ունելէն առեր է այս յարմար անունն, իւր բոյն հասկաւոր արտի մի մէջ դնելով՝ ձագեր հաներ է։ Նախատես ձագամայրն միշտ կ'ապսպրէ իւր ձագերուն, որ միտ դնեն արտին տիրոջ, թէ ինչ կը խօսի, երբ նա իւր տղու հետ կուգայ տեսնել թէ՝ արտին հնձելու ժամանակն հասեր է։ Առաջին անգամ կը լսեն ձագեր և կը պատմեն իրենց մօրն, թէ՝ հայրն իւր տղուն կ'ասէր. Որդեակ, արտը հասնելու մօտ է. գնա խօսիր մեր դրացիներուն, թող մեզի յօգն գան, արտն ի միասին քաղեմք։ Արտոյտն կը պատասխանէ՝ դեռ անհոգ կեցէք, քանի որ արտին տէր՝ դրացիներուն օգնութեան կըսպասէ, այս արտը չի քաղուիր։ Երկրորդ անգամ մտիկ տալով ձագերն՝ այս կը պատմեն թէ՝ գեղջուին իւր տղուն կ'ասէր. դրացիներ չեկան, գոնէ բարեկամներ հրաւիրէ։ Խելացի արտուտն դարձեալ նոյնն կը կրկնէ. հանգիստ եղիք, ձագերս, երբ գործը բարեկամներուն մնացեր է, յաւիտեան չի քաղուիր արտը։

Երրորդ անգամ կը պատմեն ձագերն, թէ՝ արտին տէրն՝ վա՜շ, վա՜շ անելով իւր տղուն կ'ասէր. որդեակ իմ, առ դու քո մանգաղ և ես. մենք մեր արտը քաղենք. այլ ևս դրացեաց, բարեկամաց սպասելն ընդունայն է։ Ուշադիր ձագերն երբ այս վերջին խօսք կը պատմեն իրենց մօր, մայրն կը պատասխանէ. Այժմ ստոյգ կը հաւատամ, թէ՝ արտը պիտի քաղուի. պէտք է ձեզ տեղափոխեմ։

Այս կրթիչ առակի օրինակէն արդեօք պիտի հասկանա՞յ ու խելաբերի՞ իւրաքանչիւր առանձին մարդ և ժողովուրդ, թէ՝ աշխարհիս դրացիներ և բարեկամներ ևս իրենց արտեր ունին քաղելու։

Եթէ այս այսպէս է, ինչպէս որ է ճշմարիտ. ուրեմն թող ժողովուրդ իւր յոյս միայն իւր ինքնաշխատութեան վերայ դնէ։ Եթէ իւր կեանք պահելու համար հաց հարկաւոր է, թող առնէ մանգաղ և երթայ իւր արտը քաղէ։ Եթէ ջուր պէտք է իւր չորցած արտը ոռոգելու համար, թող խցուած աղբիւրներու ակերն բանայ, փտակներու լցուած առուներ հորդէ։ Եթէ հանդերձի և այլ զանազան պէտքերու համար կտաւ կարևոր է, թող բամբակ ցանէ, կտաւ գործէ։ Իսկ եթէ փափկութեան պերճանք սիրելով՝ կերպասի կը ցանկայ, թող շերամագործութեան արուեստին հետևելով՝ յառաջ տանի զայն։

Եթէ նախանձելով եւրոպական ազգաց գեղեցիկ օրինակին՝ գիւտեր և արուեստներ հանճարել կուզէ, թող նախ դպրոց երթայ, գիտութիւն սորվի, ինքնաշխատութեան մէջ տքնի, ինչպէս նոքա։

Իսկ եթէ կասէ. ես ինչպէս ինք նաշարժ ինքնաշխատ լինիմ և յառաջ երթամ...

Պօրա՞ դարձան և ճարն ինչ է գիտես. դպրոցն է, դպրոց, և անյուսահատ ինքնաշխատութիւն. ուրիշ ոչինչ։ Ես կը տեսնեմ զքեզ այդ քո վիճակին նկարագիրը՝ շատ ճշգրիտ է։ Բայց դու պէտք է անվհատ մնաս ոգւոյդ մէջ, առանց երբէք լքանելոյ շարունակես ինքնաշխատութիւնդ, գիտենալով, որ յառաջադիմութեան ուղին ինքնանուէր շահատակութեամբ կը բացուի։ Ես գիտեմ որ խոչեր ու խութեր կան քոյ ճամբոյդ վերայ. մի սպասեր որ ամբողջ փախուին դուքա և դիւրանան քայլերդ։ Մի սպասեր դու, ինչպէս այն ապուշ ու բըթամիտ ճամբորդն, որ գետափին մօտ կեցած կը սպասէր մինչև անցնի գարուն, անցնի ամառն, աշուն գայ, ցամքի գետի ջուրը և ինքը անթաց ոտքով անցնի։

Ժողովուրդ, դու ինքնին գիտես մեր աշխարհ յորդ անձրևներ և ձիւներ շատ ունի. մեր գետերու ջրերը ով գիտէ երբ կը ցամքին. ուրեմն սրունքդ բաց, անվախ մտիր ի գետին, մինչև պարանոցդ ջրաթաց եղիր և անցիր ի միւս կողմն։

Իսկ եթէ կուզես գետերու յորդ ջուրերէն, աշխարհիս ծովերէն անկասկած անցնիլ, քաջ ուսիր լողալու արուեստն, և ուր տեղ, այդ ևս դպրոցի լճին մէջ՝ թղթով, գրով և ինքնաշխատ կրթութեամբ։

Թերևս դու այնպէս կը կարծես որ արևմտեան ժողովուրդին յառաջդիմութեան քայլերուն դէմ ծովեր ու գետեր չելան։ Ո՛չ, դու կարդա այդ ժողովուրդի պատմութիւն և պիտի ապշիս ու զարմանաս, որ նա ջրոյ և ծովու հոսանքներէն անցաւ, մինչև ի գլուխ տարաւ յառաջադիմութեան և գիտութեան յաղթանակ։ Դու մի վհատիր երբ կը տեսնաս, որ ուղիներդ դժուարին առապարներ են. այդ ամէն ինքնաշխատութեան ոտքիդ առաջ կը հարթուին և կը գիւբանան. միայն թէ դու մի վատասրտիր։

Ձեռքերդ ծոցէդ հա՛ն, մի անգամ ինքնաշխատութեան սկսէ. ի զուր է, յուսահատ օգնութիւն մի սպասեր. միթէ փորձով չը տեսնա՞ր թէ՝ աշխարհիս վերայ քեզ ոչ ոք օգնական կայ, ուստի ի բերան առ Դաւթին այս բան և աչքերդ դէպ երկնից բարձրութեան դարձնելով աղօթէ «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն.» Ասա դու. «Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։» Մի մոռնար, կարդա նաև Դաւթին միւս խրատ. «Մի՛ յուսայք յիշխանս որդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա։» Եւ թէ. «Երանի ազգի որոյ Տէր Աստուած Յակովբայ օգնական է նմա և յոյս նորա ի Տէր Աստուած է։»

Ուրեմն յոյսերդ յԱստուած և ի քեզ ժողովէ, վհատեալ ժողովուրդ, և գոնէ գիտցիր այսուհետև թէ՝ դու ինքդ ես միայն քեզ օգնական։

Այո, քո ձեռքն է քեզ օգնական, երբ գործես, արուեստահանճար լինես։ Քո աչքն է քեզ օգնական, երբ նայելով շուրջդ՝ հեռատես լինիս, ներկայէդ քո ապագայն չափես ու տեսնաս։ Քո միտքն է քեզ օգնական, եթէ զայն լուսաւորես և թողուս տգիտութեան մթաւոր ու կամաւոր կուրութիւնդ։ Քո դպրոցներն են քեզ օգնական, եթէ մանուկներդ կրթես գիտութեամբ։ Քո հայրենի հողն է քեզ օգնական, երբ դու զայն արհեստիւ մշակելով բեղմնաւորես։ Քո բազմարօտ լեռներ և հովասուն հովիտներն են քեզ օգնական, եթէ խաշնադարման լինիս և յիշես դու նահապետներուդ հովուական կեանք։ Քո այգեստանք որթերդ և պարտէզի ծառերն են քեզ օգնական, եթէ քաջ մշակելով՝ գինիով ու պտղով լնուս վաճառանոց։ Քո տնտեսական ճարտարամտութիւնն է քեզ օգնական, որ դաշտին մէջ հող սիրես և քաղաքին մէջ արուեստ և վաճառականութիւն։ Քո հայրենեաց միութեան սէրն է քեզ օգնական, եթէ իբրև մայր զիրկդ բանաս, պանդուխտ ու գաղթական որդիներդ անդրէն ժողովես և չը թողուս որ այլ ևս գրրկէդ հեռանան։ Քո հայրենի կրօն, հաւատ ու Եկեղեցին են քեզ օգնական, թէ չը մեղկանաս ի կրօն, չըլինիս հաւատաքրքիր, այլ պինդ պահես հայրենի կրօնիդ սուրբ աւանդ, զոր արիւնով ու մահով քո նախնիք քեզ անկորուստ աւանդեցին։ Վերջապէս քո ընկերսիրութեան և միաբանութեան ոգին է քեզ օգնական, եթէ զայն ուխտիւ պահես, և ի բաց մերժես երկպառակութեան ոգին, որ աւերիչ քանդիչ է ազգին ու հայրենեաց։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

(«Daily News» 9 յունվ.)

ԵՐԶՆԿԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԴԱՏԸ

Վիէննա, 8 յունվ. (Ն. տ.)

Երզնկայից այստեղ ստացուած (Կոստանդնուպոլսոյ վրայով) տեղեկութիւնները հաղորդում են այն դատի մանրամասնութիւնները, որ կատարուեց դեկտեմբերի 15-ին հայերի դէմ։

Դատապարտեալներն ընդ ամենը 58 հոգի էին, նրանցից 24-ը դատապարտուած են մահուան, 5 հոգի տաժանակիր աշխատութեանց ցկեանս, 15 հոգի դատի են մատնուած քաղաքական յանցանքների համար. մահուան դատապարտուածներից 16 հոգի մեղադրվում էին իբրև մասնակից մի մահմեդականի սպանութեան Արմշտաւում (մի գիւղ է Քեամա վիլայէթում)։ Նրանցից մի քանիսը ներկայացրին իրենց անցագրերը, որոնք ապացուցանում էին թէ յանցանքը գործուած ժամանակ նրանք այնտեղ չէին եղել, այլ Կոստանդնուպոլսում, այնու ամենայնիւ նրանք ամենն էլ դատապարտուեցին մահուան։ Ի միջի այլոց նաև մահուան դատապարտուեց մի լաւ յայտնի գրող և նոյն իսկ Կամախի Վարդան եպիսկոպոսը դատապարտուել է եօթնեայ տաժանակիր աշխատանքների։

Կոստանդնուպոլսից հասած վերջին տեղեկութիւններին նայելով սուլթանը այս օրերս մի քանի բարձրագոյն աստիճանաւորներ է ուղարկել տաճկական ասիական գաւառների նահանգապետների մօտ յատկապէս հրահանգով յանուն նահանգապետների, որով հրամայում է դէպի հայերն աւելի լաւ յարաբերութիւն ցոյց տալ։

Վերջին կիւրակէ օրը, երբ Էգաբեան պատրիարքը Զորօրհնեաց հանդէս էր կատարում Բերայի հայ կաթոլիկաց եկեղեցում, յանկարծ անըսպասելի մի խումբ ոստիկաններ երևացին եկեղեցու ներքին դռների մօտ. Նրանց գալու պատճառը չպարզուեց, բայց աղօթողների մեծ մասը կարծեցին թէ նոր անկարգութիւններ են պատահել, շտապով դուրս եկան եկեղեցուց և գնացին իրենց տները։

Մի հայ, որ հրդեհաշէջ է Իլդիզ քիօսկում, վերադառնում էր Կ. Պոլիս Բիթլիսից, ուր նա գնացել էր տունը տեսնելու, նրան ուղղակի բանտ ուղարկեցին մի քանի օրով, միայն այն պատճառով, որ նա մայրաքաղաքում բնակուող իւր մի քանի հայրենակիցներին պատմել էր թէ իր հայրենիքում գործերն ինչ դրութեան մէջ են։

Կոստանդնուպոլիս սկսել են գալ ճանապարհորդներ այն գիւղերից, որոնք հեռու չեն Սասունի կոտորածը պատահած տեղերից և լեռներից։ Նրանք ասում են որ քրդերի և թուրքերի գազանութեանց լուրերն արդէն տարածուել են հայկական բոլոր գիւղերում ձգելով ժողովրդին սարսափի և յուսահատութեան մէջ, որովհետև առաջուց ոչ ոք չէ կարող իմանալ թէ այժմ հերթը ո՞ր գիւղին է, որ զոհ դնայ անգթութիւններին։ Բանը մինչև այնտեղ է հասել, որ բաւական է մի քանի քրդեր սուտ լուր տան տաճկական իշխանութեան թէ՝ այս ինչ գիւղի բնակիչները անհնազանդ են — և գիւղը իսկոյն կ'ենթարկուի այնպիսի սոսկալի այցելութեան, որին ենթարկուեցին թշուառ Սասունցիք։

Այդ ճանապարհորդները Սասունում պատահած դէպքերի մասին բաւական ճիշտ տեղեկութիւններ են հաղորդում։ Անկարգութիւններն բռնկուել են մասնաւոր կռուից հայերի և քրդերի մէջ անասունների համար, որ քրդերն ուզում էին գողանալ։ Կռիւը վերջացել է կատարեալ պատերազմով, որի մէջ քրդերը մեծ ջարդ են կերել։

Յաղթուած քրդերը գնացել են Բիթլիսի վալիի (նահանգապետ) մօտ և հաղորդել են իբր թէ հայերը բացարձակապէս ապստամբել են։ Նահանգապետն առանց իմանալու անկարգութեանց պատճառները՝ քրդերի հաղորդածը հեռագրել է Կ. Պոլիս, միևնոյն ժամանակ անմիջական կարգադրութիւն խնդրելով։

Ձուտով կարգադրութիւնը ստացվում է յանուն վալիի, որ արդէն իւր կողմից առաջուց կարգադրութիւն էր արել երկաթեայ ապստամբութիւնն ընկճելու համար։ Գեռ կանոնաւոր զօրք ղրկելուց առաջ Համիդիէ հեծելազօրը և միւս քրդերը նոյնպէս փորձեր էին արել հանգստացնել ժողովրդին, բայց անյաջող։ Այն ժամանակ ուղարկեցին զօրքեր՝ Վանից Բիթլիսից, Մուշից, Մուսուլից, Երզնկայից, որոնք քրդերի օգնութեամբ բոլորովին շրջապատեցին Սասունցիներին՝ հրամայելով նրանց անձնատուր լինել։

Ութ գիւղեր հիմնայատակ քարուքանդ արին, 24 գիւղ սաստիկ վնասուած են։ Ազգաբնակութեան մեծ մասը, մարդ, կին և երեխայ կոտորել են ամենազազանային կերպով։

Ճանապարհորդները դրականապէս հաստատում են թէ կանոնաւոր զօրքը նոյնպէս մասնակցում էր սոսկալի կոտորածին։ Փոքրիկ երեխաներին բռնում էին բարձրացնում և յետոյ սպանում դաշոյնի հարուածներով։ Շատ անգամ մի հարուածով թռցընում էին գլուխը մարմնի վրայից։ Տղամարդկանց և կանանց կտոր կտոր էին անում և ձգում էին շների առաջ աղաղակելով «Ահա այդ աղտոտ ազգի մնացորդները» (Avvay vviht the remaius of this filthy nation)»։

Բացի դրանից հաղորդում են, որ հարիւր կանանց տուին զինուորների ձեռքը և ուղարկեցին Վան։ Ականատեսները, որոնք նրանց պատահել են ճանապարհին և Վանում, պատմում են որ կանայք հեծեծում էին և աղաղատում ու գթութիւն խնդրում, բայց ի զուր... Նրանց ուղեկցող զինուորներին անխնայ մտրակում էին նրանց և քշում առաջ։ Թէ ինչպէս է վերջացել նրանց վիճակը - յայտնի չէ։ Հաղորդում են որ մի քրդական տանուտէր դիմեց զինուորներին հաւաստիացնելով թէ կանանց գերի տանելը լուրջ հետևանքներ կը բերէ, բայց նրա խօսքերը ոչ մի ազդեցութիւն չարին։ Աւերուած գիւղերի բնակիչներից մի քանիսը ազատուեցին փախչելով, բայց նրանց թիւը յայտնի չէ, ինչպէս յայտնի չէ թէ ուր են փախել և որտեղ թագնուել։ Մշոյ հովտի Վարդենիս, Արտոսի և Մուշակշէն երեք գիւղերի բնակիչները, որոնք բաղկացած էին 750 տնից, ամենքը ցիր ու ցան եղել և փախել զանազան կողմեր, որովհետև քրդերը աւերեցին նրանց գիւղերը և Սասունում իրենց կրած պարտութեան վրէժն այդ գիւղերից հանեցին։ Մուշի, Գոմսի և Բասէնի մէջ տեղի գիւղերը նոյնպէս կողոպտել են Համիդիէ հեծելազօր քրդերը և ինչպէս պատմում են դրանց բնակիչներից շատերը փախել են Ռուսաց հողը։ Սարսափն այն աստիճան սաստկացել է, որ գիւղացիք չեն կարողանում իրենց դաշտերը մշակել, որովհետև քրդերը յարձակվում են կողոպտում և նրանց տաւարը և գութանները խլում։ Առաջ հայերին թոյլ էր տրվում զէնք կրել քրդերի յարձակմունքներից պաշտպանուելու համար, բայց չորս տարի սրանից առաջ կառավարութիւնը խլեց նրանց զէնքերը և մինչև այժմ նրանք անզէն զոհեր են քրդերի ձեռքում, որ ոչ միայն խլում է նրանց կայքը, այլ և՛ պատիւը և՛ կեանքը։

Բիթլիսի վալին Սասունի լեռներում գործը վերջանալուց յետոյ, իւր վիլայէթում ապրող հայերին ստիպել է ստորագրել մի հանրագիր, իբր թէ Սասունի հայերը կոտորուել են անհնազանդութեան պատճառով. իսկ որոնք մերժել են այդ հանրագիրն ստորագրել (մերժողների թիւը շատ

մեծ է) բանտարկուած են։ Քիչ չէ-տոյ դրանցից շատերը բանտից և տանջանքներից ազատուելու համար համաձայնուեցին վալիի պահանջը կատարել և ազատուել հալածանքներից։ Ինչպէս լսվում է՝ վալին այդ դօկումենտն ուղարկել է Կոստանդնուպօլիս։

Բիթլիսի վիլայէթում անընդհատ հալածանքի ենթարկուած հայերի [illegible] և Սասունի բնակիչների կրած [illegible] միայն առած կը հարկադրեն ճշմարիտը խօսել այն վկաներին, որոնք պէտք է հարց ու փորձի ենթարկուեն, նոյն իսկ այն դէպքում, եթէ դրա համար նրանք կեանքից զրկուեն։ Հայերը բացարձակապէս յայտնում են, որ աւելի շուտ կը համաձայնեն մեռնել քան շարունակել ապրել ներկայ պայմանների մէջ, ուր բոլորովին չկայ սեփականութեան և կեանքի ապահովութիւն»։

Կոստանդնուպօլիս 8 յունվարի.

Հէնց նոր հրատարակուեց պաշտօնական հերքումն այն տեղեկութեան, որ հաղորդում էր Սվազի վիլայէթում ծագած խռովութիւնների մասին, նոյնպէս ըստ տաճկական պաշտօնական տեղեկութեանց անհիմն են համարւում Վանի վիլայէթից ստացուած տխուր լուրերը։

Իսկ ինչ վերաբերում է հայաստանում լինելիք րէֆօրմների խնդրին, պաշտօնական շրջաններում յայտնում են թէ Օսմանեան կառավարութիւնը պիտի [illegible] այնպիսի միջոցներ ձեռք առնել, որոնք բարիք բերեն ժողովրդի համար, առանց կրօնի և ազգութեանց խտրութեան։

Տաճկական լրագրները ժամանակ առ ժամանակ տեղեկութիւններ են տպագրում այն վրդովմունքների և անկարգութիւնների մասին, որ իբր թէ առաջացնում են հայ ագիտատօրները, մինչև անգամ տպագրում են սպանութեանց, աւազակութեանց և կողոպուտների հաշիւներ և աւելացնում են թէ տաճկաց ամենաողորմած բարերար իշխանութեան տակ ապրող հայերը շատ դժգոհ են իրենց հայրենակիցների գործած (!) այդ յանցանքներից։

Հայ պատգամաւորները, որոնք ներկայացել էին Գլադստոնին և մի պնակ նուիրել ի նշան յարգանաց, ամենքն էլ մի մի նուէր են ստացել Մեծ ծերունուց։ Գլադստոնն անգլօ-հայկական ընկերութեան միջոցով խաչաքանդակ պատգամաւորի նուիրել է գրաւիւրների մի գեղեցիկ ժողովածու, որ ներկայացնում է Հովարդէնի եկեղեցին և տիկին ու պարոն Գլադստոնների պատկերները։

Կ. ՊՈԼԻՍ ԲԵՐՈՒԱԾ ԿԱԼԱՆԱՒՈՐՆԵՐԸ

(«The «Daily News»)

Անցեալ դեկտեմբերի 31-ին «Դէյլի Նիւզը» հետեւեալ հեռագիրն է ստացել Օդէսսայից.

«Մոսկվայի գազէտը» յայտարարում է, թէ Սասունի կոտորածների առթիւ Բ. Դուան նշանակած քննութիւնը՝ նախորդների նման մի լոկ փարս, այսինքն խաղ կըլինի։ Գազէտն աւելացնում է, թէ այլևս չպիտի մոլորուին Թիւրքաց կառավարութեան ակներև ու խաբուսիկ պատրուակներով, և շարունակում է. «Մենք իմացել ենք, որ Վանի նահանգապետը պահում է բանտում քսան հայ զինակիր ապստամբներ, որոնք բռնուած են Թիւրքաց ասորիճանաւորների դէմ բացայայտ կերպով կռուելու միջոցին։ Ամեն մարդ կը հասկանայ, թէ տաճկաց կառավարութիւնը ինչ մտքով է առաջնորդվում մի այդպիսի խոշոր մեղադրանք հրատարակելիս»։ Այդ «հնարովի ստութեան» դէմ իւր բացարձակ թերահաւատութիւնը յայտնելուց յետոյ՝ ռուս լրագիրը շատ ի դէպ հարցնում է, թէ արդեօք քանի՞ հազար փարա են վճարել այդ կաշառուած «ապստամբներին», որպէս զի նրանք այն ասեն Թիւրքաց և եւրոպական հիւպատոսների կոմիսիայի առջև, ինչ որ թելադրած կը լինին իրենց վատթար մեծաւորները։ «Մեր համբերութիւնն ու զիջողութիւնն Օսման. կառավարութեան նկատմամբ արդէն սպառուել են», ասում է լրագիրը։ Ահա որոշ ու բացայայտ գրուած կենում է Բերլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածը։ Դրէք այլ ևս մի անգամ Բ. Դուան առջև այդ յօդուածը մի վճռական և հաստատուն հարցմունքով, թէ արդեօք սուլթանը մտադիր է անմիջապէս իրագործել դրա որոշ պատուէրները, թէ մտադիր չէ։ Տուէք Բ. Դուան այս ինչքան ժամ կամ այս ինչքան օր պատասխանելու համար, և եթէ պատասխանը անպայման հաստատական չլինի և նրա իրագործութիւնն իսկոյն չսկսուի եւրոպական ներկայացուցիչների հսկողութեան տակ, թող այն ժամանակ դաշնադիր պետութիւնները, որոնց վրայ այնքան մեծ պատասխանատուութիւն է ծանրանում, լինքեանք ձեռնամուխ լինին գործին՝ ընդ միշտ լուծելու համար մի խնդիր, որ արդէն խայտառակութիւն է բերում քրիստոնեայ Եւրոպային»։

Փ. Վ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վաղը, շաբաթ, յունվարի 14-ին Վեհափառ Մկրտիչ I Կաթողիկոսի անուանակոչութեան տօնն է։ Թիֆլիզը բաղդ ունի վաղը Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ տօնել այդ սիրական օրը։ Հայ ժողովուրդը աշխարհի ամեն ծայրերից այսօր իւր զգացմունքներն ուղղած է դէպի Վեհափառ Հայրապետի Զայնը. ահա այդպիսի մի օր մենք սրբազան պարտք ենք համարում լսելի անել հայ ժողովրդին Խրիմեան Հայրիկի Զայնը, թէ նա ի՞նչ է ասում իւր Սիրաք և Սամուէլի մէջ ժողովրդի «ինքնաշխատ յառաջադիմութեան» մասին։

* * *

Անգլիական լրագրներում հրատարակուած է լօրդ Կիմբերլէի հետեւեալ գրութիւնը.

Արտաքին գործոց նախարարութիւն

8 յունվ. 1895 թ.

Սէր,

Լօրդ Կիմբերլէի յանձնարարութեամբ, հաղորդում եմ Զեզ Զեր սոյն տարւայ յունվ. 3-ից գրած նամակի ստացման մասին և յայտնում եմ նորա շնորհակալութիւնը, որ հաղորդել էք Չէստերում տեղի ունեցած Հայկական կօնֆերէնցիայի վերջին որոշումների մասին այն խնդրի նկատմամբ, թէ արտաքին գործոց նախարարութիւնն ինչպէս պէտք է վերաբերուի դէպի հայերը։ Ի պատասխան Զեր նամակի հաղորդում եմ Զեզ, որ այն տեղեկութիւնները, որոնց վրայ դարձնում էք Զեր ուշադրութիւնը անստոյգ են և որ Նորին Մեծութեան Թագուհու կառավարութեան ջանքերը նախ և առաջ ուղղուած են դէպի այն, որ ստուգուի Հայաստանում կատարուած սպանութիւնների կատարեալ ճշմարտութիւնը, սպանութիւնների, որ Օսմանեան կառավարութիւնը դրականապէս հերքում է։

Ընդունեցէք և այլն.

Սանդերսոն»։

* * *

ՈՒՍՇԻՆԳՏՕՆԻ լրագիրները հաղորդում են, որ պատգամաւորների ժողովը ընդունել է դիպլօմատիկական բիլը։ Այդ բիլի զօրութեամբ Հիւսիսային Միացեալ-Նահանգների հիւպատոսներ են նշանակվում Էրզրումում և Խարպութում։ Այս կարգադրութիւնը պատճառաբանվում է Թուրքերի և քրդերի Հայաստանում գործած անգթութիւններով։

* * *

Անգլիական լրագրները հաղորդում են որ Սրում-փաշան, որ պէտք է նախագահէր հայկական քննիչ մասնաժողովին, չէ գնալու իր պաշտօնատեղին։ Նա արդէն Տրապիզօնից Կ. Պօլիս է վերադարձել։

* * *

ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

Կ. Պօլի Ռէյտէրի գործակալութիւնը հեռագրում է. «Հայոց պատրիարք Իզմիրլեանը վերին աստիճանի անկախ է պահում իւրեն տաճկական կառավարութեան վերաբերութեամբ։ Այս օրերս սուլթանի մօտ տեղի ունեցած ունկնդրութեան միջոցին պատրիարքը մեծ ազատութեամբ յայտնեց իւր կարծիքը եկեղեցու պարտաւորութեան և հայոց ազգի մասին։ Սուլթանը ընդմիջեց նորան հետեւեալ բառերով. «Ես բաւականաչափ լսեցի յատուկ ձեր մասին։ Աշխատեցէք լօյալ (հաւատարիմ) հպատակ լինել և յայտնեցէք ձեր հայերին, որ նոքա հանգիստ մնան»։

«Daily News»-ի Կ. Պօլսոյ թղթակիցը հաղորդում է որ հայոց պատրիարքը կատարեց իւր սովորական երդումը սուլթանին և հայոց ազգին հաւատարիմ լինելու։ Երդման հանդիսին շատ աւելի ժողովուրդ էր ներկայ քան նախընթաց տարիները. ներկայ եղողների թիւը շատ հազարների էր հասնում։ Երդումն անելուց յետոյ պատրիարքը յայտնեց իւր աշխարհահայեցողութիւնը դէպի իւր հայրենակիցները, այն է հաւատարմութիւն դէպի սէրութիւնը և կեանքի, պատուի և գոյքի ապահովութիւն։

* * *

Բագուի գործարանատէրերի բողոքը հետզհետէ սաստկանում է Նօբելի և Րօտշիլտի առևտրական տների դէմ, որոնք իրենց ձեռքն են ձգել սինդիկատի բոլոր իրաւունքները և միայնակ են վայելում նորա արդիւնքները։ «Բիրժեվիա Վեդօմոստի» թղթակիցը հաղորդում է որ վերոյիշեալ երկու ֆիրմաները իրենց քէֆի ուզածին պէս են կարգադրում սինդիկատի գործերը և փոքրիկ ֆիրմաներից կէրօսին ստանալով, այդ ապրանքի փոխարէն փող չեն վճարում։ Շատ հաւանական է որ այդ հանգամանքը շատ ծանր դրութեան մէջ է դնում Բագուի մանր գործարանատէրերին։ Նրանք չեն կարող կանգնեցնել գործարանը, պարտաւորուած են որոշ քանակութեամբ կէրօսին որոշ ժամանակ յանձնել ագէնտներին, իսկ գործարանը բանեցնելու համար դրամագլուխ է հարկաւոր և որովհետ գլխաւոր ագէնտները դրամ չեն տալիս, ուստի նրանք էլ ստիպուած են մասնաւոր անձինքներից վերցնել աճագին տոկոսով, որի նմանը նրանք չեն ստանում իրենց ապրանքից։ Ինչպէս հաղորդում է «Բիրժ. Վեդօմ.» թղթակիցը մասնաւոր անձանց ձեռքում առևտրական տոկոսը հասնում է մինչև 15%, այն էլ պահանջվում է մեծ երաշխաւորութիւն։

Գործարատէրերը շատ դժգոհ են— ասում է թղթակիցը— որ բոլոր ապրանքը ծախվում է միայն երեք մեծ ֆիրմաների անուամբ։ Գնողները 5 տարուան ընթացքում պիտի ճանաչեն միայն Նօբելին, Րօտշիլդին և Մանթաշեանին, իսկ առևտրական գործի մէջ այդ աճագին նշանակութիւն ունի, ի զուր չեն ֆիրմայի անունը վաճառում տասնեակ և հարիւր հազարներով։»

Ի հարկէ այժմ արդէն ուշ է մտածել այդ մասին, որովհետև գործարանատէրերը իրենք կամաւ են կապել իրենց ձեռքն ու ոտը և յանձնել երեք յայտնի ֆիրմաներին. իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին որ նրանք ոչինչ չեն վճարում ստանձած կէրօսինի փոխարէն, այդ մասին ճիշտ որ պէտք է մտածել, որովհետև դա տանում է դէպի սընանկութիւն այն առևտրական տները, որոնք աւելի շահ են վճարում, քան թէ կարող են ստանալ իրենց ապրանքի վաճառումից։

* * *

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են.—Տեղւոյս դպրոցի նախկին հոգաբարձութիւնը՝ իւր յաջորդներին, այսինքն այժմեան հոգաբարձութեան թողել էր զուտ պարտք 2000 ռ.։ Իսկ ներկայ հոգաբարձութիւնը, որ բաղկացած է երկու տիկնիից և երկու պարոնից, իրանց պաշտօնն ստանձնած օրից այնպէս համեստութիւն ցոյց տուին և այնպէս սիրով ու եռանդով կպան գործին, որ յընթացս իւր չորսամսեայ գործունէութեան վճարեց ուսուցչաց ռոճիկը լրիւ մինչև ներկայ յունվ. ամսոյս մէկը և 1500 ռուբլի ևս պարտքից պակասացրեց։

Ահա թէ ինչ ասել է մի քիչ կամք ունենալ և մի քիչ էլ գիտակցաբար ու անկեղծօրէն վերաբերուել ստանձնած գործին։

Հոգաբարձութեան խնդրանօք երեք պարոն՝ Ս. Յովհաննիսեանը, Ե. Շահմելիքեանը, Գ. Րօյաճեանը և դպրոցի երգեցողութեան ուսուցիչ Սիւքիասեանը, սիրով յանձն առան «Աւետիս» ման գալու ճրագալոյց երեկոյեան, որի արդիւնքն եղաւ 300 ռուբլուց աւելի յօգուտ դպրոցի։

—Մեր քաղաքի քահանայական հարցը էլի նոյն առկախ դրութեան մէջ է. ով ասէք գալիս է, սակայն յայտնի չէ թէ ում հրամանով, քանի որ ոչ մէկ պաշտօնական թուղթ չեն ունենում։ Զարմանալի է թէ ինչու հոգևոր իշխանութիւնը չի կանոնաւորում այստեղի քահանայական հարցը, որի մասին քննութիւն եղաւ։ Քանի որ հոգևոր իշխանութիւնը մի որոշ ու [illegible] կարգադրութիւն չանի, մեր եկեղեցին միշտ կը մնայ անշուք դրութեան մէջ և ժողովրդի սիրտն էլ հետզհետէ կարող է սառչել իւր սիրած եկեղեցուց։

* * *

ՂԶԼԱՐ քաղաքը ծանր ճգնաժամի մէջ է գտնվում և նրա ընդարձակ արդիւնաբերութեանը մեծ վտանգ է սպառնում։ Ինչպէս յայտնի է Ղզլարի այգիների արտադրած ահագին քանակութեամբ գինին և սպիրտը արտահանվում էր Ռուսաստան և գլխաւորապէս վաճառվում էր Նիժնի Նովգորոդի տօնավաճառի ժամանակ։ Ամբողջ Ղզլարի և Ռուսաստանի միջնորդ այդ գործում հանդիսանում էին երկու նշանաւոր առևտրական Իվմիրեան և Մամաջանեան տները, որոնք ռուս առևտրական ցեխաձևով Սմիրնովի սընանկութեան պատճառով անյաջողութիւն կրեցին և այժմ գրեթէ բոլորովին դադարեցրել են իրենց առևտուրը։ Ինչպէս գրում են Ղզլարից «Նով. Օբօզրեն.» լրագրին Ղզլարում այս տարուան ամբողջ բերքը մնում է անվաճառ։ Այգետէրերը զգացել են դրա ծանր հետեւանքները և մի յանձնաժողով են ընտրել իրենց միջից, որ պէտք է զբաղուի այն հարցով, թէ ինչ հնարներ գտնել Ղզլարու գինիները վաճառելու համար։ Թղթակիցը շատ իրաւացի է նկատում որ այգետէրերի նեղ դրութեան գլխաւոր պատճառն այն է, որ նրանց մէջ զարգացած չէ ընկերական գործակցական ոգին և նրանք տժենքը նայում են մի կամ երկու մեծ առևտրական տների ձեռքերին։ Անշուշտ ցանկալի է որ Ղզլարու այգետէրերը խրատուելով վերահաս վտանգից աշխատեն կանոնաւոր ընկերութիւններ կազմել և միացեալ ոյժերով արտահանել իրենց գինին, որ արդիւնքի միակ աղբիւրն է ամբողջ Ղզլարի համար։

* * *

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

(Նամակ խմբագրութեան)

Այս քանի օրերս, վերադառնալով Երևանեան նահանգում արած իմ ճանապարհորդութիւնից, կարդացի գիւղատնտես պ. Ա. Աթանասեանցի առաջարկութիւնը՝ հիմնել Երևանում գիւղատնտեսական մի ընկերութիւն։

Ով որ երբևիցէ ճանապարհորդել է Երևանեան նահանգում, նոյն իսկ ոչ որպէս մասնագէտ գիւղատնտես, այլ որպէս լոկ ճանապարհորդող, նա անշուշտ նկատած կը լինի, որ Երևանեան նահանգը՝ թէ իւր աշխարհագրական առևտրական դիրքով, թէ կլիմայական՝ երկրաբանական պայմաններով և թէ բնակչական արդիւնաբերական արժէքով, մեր Անդրկովկասի միւս հինգ նահանգներից ամենից աւելի կարևոր վայրն է ներկայանում, որովհետև այստեղ սկսած տաք, հասարակածային, հարուստ երկրներին յատուկ բուսական արդիւնաբերութեան արդիւնքներից մինչև բարձր ալպեան երկրներին միայն յատուկ արդիւնքները ամենայն յաջողութեամբ բըսնում է և այդպիսով դառնում տեղական ազգաբնակութեան հարստութեան աղբիւրը. սակայն չնայելով այս նահանգի յաջող բնական պայմաններին, այնուամենայնիւ տեղացի երկրագործների աղքատութիւնն անհերքելի փաստ է. այդ է հէնց պատճառը, որ որպէս հարուստ դաշտավայրերում ապրող ազգաբնակութիւնը նոյնպէս և համեմատաբար աղքատ՝ ցուրտ սարահարթերում ապրող ժողովրդի ներքին, քաղաքակրթութեան կեանքի մէջ գրեթէ ոչ մի աչքի ընկնող տարբերութիւն չէ նկատվում. որովհետև այն ինչ դրանցից առաջինները գինի, օղի շատ ունին, երկրորդները՝ հաց, կաթ, իւղ ու պանրով հարուստ են. իսկ դրամը որպէս տեղական մթերքների փոխանակութեան արդիւնք կամ թափած աշխատանքի ամենայարմար հետևանքը, երկուսի մէջ ևս գրեթէ հաւասար կերպով բացակայում է։ Գիւղատնտեսական պարապմունքի այս աննպաստ դրութիւնը, բնական է որ արդիւնք է Երևանեան նահանգի բազմաքանակ բերքերի աննման արտահանութեան։ Արդիւնաբերողը չունի այնքան նիւթական կարողութիւն իւր մթերքները վաճառատեղի տանելու, իսկ միւս կողմից վաճառատեղիներում նոյն իսկ չկայ եռանդուն փոխանակութիւն, առևտուր։ Ովքեր են մթերքների սպառողները. այդ նահանգի մի քանի քաղաքների բնակիչները, որոնց թիւը 30—40 հազարից չէ անցնում, այն ինչ նոյն նահանգում արդիւնաբերող ոյժերը 500 հազարից անց են, այդ երեսուն քառասուն հազար մարդկանց հում մթերքների մէջ ունեցած պէտքերը բաւականացնելով պարզ է որ չի կարող տեղական արդիւնաբերող ազգաբնակութիւնը բաւականանալ, այլ նրան հարկաւոր են սպառողների աւելի մեծ թիւ, որ բնական է կարող է գտնուել միայն մեր երկրից դուրս, այսինքն արտահանութեամբ ուրիշ հեռաւոր այնպիսի երկիրներ, որ վերև յիշած պայմանների բոլորովին հակառակն են։ Սակայն ո՞ւր։ Ռուսաստան արտահանելով մեր երկրի հացահատիկները մենք չենք կարող յուսալ յաջողութիւն գտնել, քանի որ նախ Ռուսաստանումն էլ նոյն դրութիւնն է տիրապետում, ինչ և մեզ մօտ, այսինքն այնտեղ էլ տեղական սպառողները անհամեմատ քիչ են արդիւնաբերողներից և ապա ճանապարհածախսը շատ թանգ է նստում։ Տաճկաստան, Պարսկաստան արտահանելով նոյնպէս մենք օգուտ չունենք քանի որ նախ այդ երկիրները շատ աղքատ են և ապա նրանք ևս դարձեալ նոյն և գուցէ աւելի վատ պայմաններում են ապրում քան մեր երկրի արդիւնաբերողները։ Հնդկաստան կամ Անդրկասպեան երկիրներ տանելը տասնապատիկ աւելի թանգ կը նստի արդիւնաբերողին քան նրա հում մթերքը, իսկ Եւրոպային գալով մենք նրանից այնքան հեռու ենք, որ մտածել անգամ դրա մասին մեզ վնասակար է։ Ուրեմն ի՞նչ է մնում տեղական արդիւնաբերողին անել.

ա) Թողնել կամ սահմանափակել հացահատիկների մշակութիւնը, այնտեղ ուր թէ կլիման թէ հողը ընդունակ են ուրիշ աւելի թանկագին և հաւուագիտ բոյսեր՝ որպէս բամբակ, չալթուկ, քնջութ, վուշ, ծխախոտ, կանեփ և պտղատու ծառեր։

գ) Լեռնոտ տեղերում, սարահարթերում առանձին ուշադրութիւն դարձնել անասնապահութեան վրայ և երկրագործութեամբ պարապել այնքան որքան բաւական կը լինի դրանից ստացած բերքերից իրենց հացը ունենալ։

դ) Ույժ տալ կաթնատնտեսութեան, անասնաբուծութեան, երկրագործութեան մի խօսքով անասնապահութիւնից ստացած արդիւնքներին։

ե) Երկրի կենդրոններում զարգացնել տեխնիկան, մեքենագործութիւնը, որով տեխնիկական արդիւնքները աժան և օրինաւոր պատրաստել կարողանային։

զ) Ստեղծել արտաքին յարաբերութեանց միջնորդներ՝ ընկերութիւններ, գործակալութիւններ, մ[ի]ութիւններ և այլն։

Դրա հետեւանքը կարող է լինել նախ այն, որ մեր երկրի հում մթերքները, մանաւանդ հացահատիկները չեն մնայ արդիւնաբերողների մօտ, անօգուտ, այլ դրանց մի մասը սպառնած կը լինի ինքը՝ արդիւնաբերողը, իսկ մնացեալը՝ քաղաքացիները. երկրորդ, քաղաքները կը դառնան իսկական վաճառատեղիներ, ուր կը շտապեն իւրենց մթերքները վաճառ հանելու բոլոր տեխնիկական բոյսեր մշակող և արդիւնաբերողները. երրորդ՝ նոյն այդ քաղաքներում կը մշակուին հում տեխնիկական բոյսերի մի մասը, իսկ միւսը՝ հեշտութեամբ կարտահանուեն, և չորրորդ՝ սարերում և դաշտավայրերում ապրող ազգաբնակութեան մէջ կառաջանայ, շնորհիւ մթերքների տարբերութեան, սերտ և արագ հաղորդակցութիւն և շփումն. իսկ այդ բոլորը միասին կը նպաստեն երկրի արդեանց սպառման կամ դրամագլխի և հարստութեան շատանալուն բուն արդիւնաբերողների, մասսայի մէջ։ Իսկ մեր երկրով անցնող երկաթուղին ապագայում նոր կեանք և ոյժ կը տայ գործերին, առևտուրին։

Սակայն ո՞ւմ վրայ է ընկնում այս բոլոր երկրի առաջադիմութեանը նպաստող առաջարկների իրագործման պարտքը, եթէ ոչ տեղական ինտելլիգէնտ արդիւնաբերողների, արտահանողների, կալուածատէրերի վրայ։ Եթէ նրանք շարունակեն ձեռքերը ծալած նստել և ոչինչ չանել, դրանով թէ իրենց կեանքի մէջ ոչ մի առաջադիմութիւն չէ առաջանայ և թէ երկրի ազգաբնակութեան։

Միայն պ. Ա. Աթանասեանի առաջարկած գիւղատնտեսական մի ընկերութիւնը կարող է Երևանում սկսել այդ համակրելի գործը և յաջողութեամբ առաջ տանել։ Իսկ թէ ինչ կարող է այդպիսի մի ընկերութիւն անել այդ բանը որոշում է բաւականին պարզօրէն ինքը պարոն Աթանասեանը «Մշակի» մէջ հրատարակած իւր յօդուածում։

Թող Երևանցի երիտասարդները, կալուածատէրերը աւելի եռանդով կպչեն այդ գործին, քան այն, որ նրանք մինչև այժմ մի ուրիշ գործի են կպել—այն է կուսակցական պչչքարին։

Դ. [illegible]։

* * *

Չորեքշաբթի յունվարի 11-ին տեղի ունեցաւ Թիֆլիզի 2-րդ գիմնազիայի նոր շինութեան օրհնութիւնը։ Առ այժմ միայն պատրաստ է շինութեան այն մասը, ուր պիտի ապրեն գիմնազիայի աշակերտները և մինչև դասաբանների բաժնի շինութեան վերջանալը դասատուութիւնները պիտի լինեն նոր շինուած սենեակներում։ Դպրոցի օրհնութեան ներկայ էին երկրիս պ. կառավարչապետը, Թիֆլիզի նահանգապետը, Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, դպրոցի վարչութիւնը աշակերտները և նրանց ծնողները։ Հանդիսից յետոյ գիմնազիայի դիրեկտոր պ. Դբբօգլավը մի ճառով շնորհակալութիւն յայտնեց ամենքին, որոնք օժանդակել են այդ նոր շինութեան կառուցանելուն։ Այս տարուան առաջին կարգի պարգև ստացող 28 աշակերտներից միայն 3-ը հայեր են, այն է՝ Գրիգ. Աղասարեան, Ճաւարշ Ջալալեան և Յովհ. Սարգսեան։

* * *

Հակադիֆտերիտեան շիճուկի գտնող դօքտոր Րուն բժիշկ պ. Խալաթեանի միջոցով նուիրել է Թիֆլիզ [illegible] 200 [illegible] իր գտած դեղից։ Բժիշկ Խալաթեանն այդ դեղը ներկայացրել է քաղաքային վարչութեան՝ որ իւր կողմից յանձնել է քաղաքային բժշկական առողջապահական խորհրդին։ Պէտք է Թիֆլիզ քաղաքը երախտապարտ լինի դօկտոր Րուին, որ նա իւր փրկարար գիւտի բարիքից չէ զրկել և նրա մանուկներին։

* * *

Խմբագրութիւնս ստացաւ սարկաւագ Յ. [illegible] «[illegible]» աշխատութեան առաջին գիրքը, որ տպագրուած է Թիֆլիզում Շարաձէի տպարանում։ «Մոռացուած աշխարհը» շատ հետաքրքրական նիւթեր է բովանդակում իւր մէջ հայ գիւղական կեանքից և շատ բնորոշ երեսներ, որոնք ցոյց են տալիս թէ ինչպէս է հարստահարվում հայ մշակը և գիւղացին։ Ափսոս որ գինը մի քիչ թանգ է, այն է՝ 50 կոպէկ։

* * *

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հեռագրում են «Կավկազ» լրագրին, թէ ժողովրդական լուսաւորութեան նախարարութիւնը կարգադրել է որ [illegible]

* * *

Օդեսսայի լրագիրները հաղորդում են թէ Օդեսսայի զօրաբանակի հրամանատար կոմս Մուսին-Պուշկին, որ ուղարկուած էր Կ. Պօլիս և Աթէնք Նիկոլայ II Կայսեր գահակալութիւնը ծանուցանելու համար, վերադարձաւ Օդեսսայով Պետերբուրգ և իւր հետ շատ [illegible] Ընծաների թւում կան երկու հիանալի, իսկական արաբական ձիեր, մինը մոխրագոյն և միւսը գորշ, դրանց ուղեկցում է տաճկական պալատական ձիավարժը, որ ազգով թերեքէ կօզակներից է և երեք ուրիշ ձիապաններ։ Ձիերը ծածկուած են թանկագին արծաթով ու ոսկով ասղնեգործած ծածկոցներով։ Կան նոյնպէս հիանալի թանկագին գորգեր, գունաւոր կերպասեայ և մետաքսեայ կտորներ։ Կոմս Մուսին-Պուշկինին ուղեկցում է Պետերբուրգ տաճկաց սուլթանի թեկնապահը։

* * *

ՂԱՐՍԻՑ գրում են «Նով. Օբօզր.» լրագրին. — «Վերջին օրերս կրկին Տաճկաստանից եկան մեր նահանգը հայ գաղթական 5 ընտանիք, որոնց անդամների թիւը 58 հոգու է հասնում, դրանք ամենքն էլ ոչ մի անցագիր չունին։ Այդ գաղթա-

կաններն ամենքն էլ պատսպարան են գտել Կարսի նահանգի, Զարուշատ գաւառի Փոքր-Պարգէթ գիւղում:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Պ. Բարտելէմի Սէնտ-Իլլերը, որ ինչպէս յայտնի է, նորերումս `բոլորել է իւր իննսունամեայ հասակը, շուտով հրատարակելու է երկու մեծ հատոր in 8° Կուզէնի փիլիսոփայութեան մասին (Philosophie de Victor Cousin), որի ամենաընտիր աշակերտն է եղած:

Արիստոտէլի հռչակաւոր թարգմանիչը վեր է կենում ամենայն առաւօտ 5 ժամին, թէ ձմեռը և թէ ամառը աշխատում է մինչև կէսօրը: Այնուհետև զբօսնում է կամ մի քանի այցելութիւններ անում, ապա վերադառնում է և նորից սկսում է աշխատել: «Le Figaro»-ն, որից քաղում ենք այս տեղեկութիւնները, աւելացնում է. «Եւ այսպէս կը լինի տակաւին երկար տարիներ»:

Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն Վարշավայի համալսարանի ուսանողների թիւր 1894—5 ուսումնարանական տարեշրջանին 883-է: Նախընթաց տարուայ հետ համեմատելով ուսանողների թիւր 214-ով պակասել է: Ըստ մասնագիտութեանց ուսանողներից պատմ.-կանոնագիտական բաժնումն են—27, ֆիզիքօ-մաթեմաթիքական—98, իրաւաբանական-303 և բժշկական —455 հոգի:

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 2-ն յունվ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Թէև ապշութեան շրջանը մասամբ անցած կը համարուի, սակայն ինձի այնպէս կը թուի թէ աւելի ծանր օրերուն մէջ կ'ապրինք:

Ճիշտ է Սրբազան Իզմիրլեան պատրիարքի ընտրութիւն և նորա հաստատ կամք փայլուն յոյսեր կը ներշնչեն, սակայն ոչ հեռաւոր անցեալին ճնշում այնչափ զօրեղ հետևանքներ թողած է, որ հոս մտքեր դեռ կը գտնուին կաշկանդման վիճակի մէջ:

Փակեալ աչքեր, իրաւ է, բացուած են և կրնային, բայց նոքա միայն կրնային և դեռ տեսնել չեն համարձակիր...

Ինձի թէև այս վիճակ ողբերական կուգայ երբ կը մտածեմ «պատմութեան», «պատմական հանդամանքներու» և այլն այսպիսի արդարացուցիչ բառերու վրայ, սակայն իրաւն ըսելով — զգալի է տեսնել թէ որչափ կը պակսի ոչ միայն դիւցազնական, այլ նոյն իսկ տարրական անձնասիրական ոգին Պոլսոյ ամեն դասակարգերէ բաղցեալ հայերուն մէջ:

Այս հանգամանք շատ աղէկ կը զգան եւրոպացիք, որք ոգի ի բռին կ'աշխատին հայկական խնդրոյն համար և որքան կրցայ հասկնալ նոցա քանի մի ներկայացուցիչներու լուրջ խօսքերէն՝ այդ կիսամեռելութիւն նոցա վրայ «չափազանց գէշ» աղդեցութիւն կընէ:

Անցեալ նամակներուս մէջ ձեզ յիշած էի այստեղի լրտեսներու համար: Ան ատեն, այդ լրտեսներ պաշտօնական էին, իսկ այժմ այլ շրջան է.—լրտեսք կամաւոր են: Իւրաքանչիւր տաճիկ Պոլսոյ մէջ այսօր լրտես է:

Խոժոռ նայուածքներու սակաւ կը հանդիպիք, այլ ամենուրեք ժպիտ կը տիրէ, որ աւելի չարագուշակ է քան կծկահոյանք:

Կրնայիք կը մտնենայ տաճիկ ծանօթ մը. (խօսքս հասարակ մարդոց համար չէ) ծայրայեղ քաղաքավար ժպտով մը—«Աղէկ եղաւ, կըսէ, յեր գործ, աղէկ եղաւ, սուլթանը կ'ուզէ ձեզ հայերուդ ազատութիւն տալ. պէտք է, պէտք է, ջանըմ, ինչու համար չտալ, ամենքս ալ մարդ ենք» և այլն...այսպիսի խել մը խօսքեր, և կրնայիս որ կատուն եկեր է կտոր մը միս գողնալու...

Նաւահանգստներու վրայ սահմանեալ հսկողութիւնը կրկնապատկեր և եռապատկեր է կառավարութիւն. որովհետև անակնունելի հոսանք մը սկսեր է Փոքր - Ասիոյ գաւառներէն դէպ Պոլիս: Գաւառներէն եկողներ ամենքն անխտիր կըհաստատէն Սասնոյ, Մուշի և այլ տեղերու մէջ կատարուած սոսկալի ոճիրներու պատմութիւններ: Կառավարութիւն եկողներէն շատերուն կը ձերբակալէ երկնչելով որ մի գուցէ աղօնք անցնին Եւրոպա ու այնտեղ իբր ականատեսք նկարագրեն թիւրք զօրաց և քրդական հրոսակաց կատարած ոճիրներ:

Հաստատ աղբիւրներէ երէկ իմացայ, որ Փոքր-Ասիայի եւրոպական հիւպատոսներ գրեթէ ամենքն ալ զեկուցագրեր ներկայացուցած են իրենց կառավարութեանց, որոնց մէջ ոչ միայն կը վաւերացունեն մինչև ցարդ լրագրերուն մէջ հաղորդուած տեղեկութիւնք Սասնոյ կոտորածի առթիւ, այլ և բազմաթիւ ոճիրներու լրացուցիչ նկարագիրը կըսեն, որք ստլրգած են թղթակիցներու գրիչէն: Այդ քանէն իրազէկ է Բարձրագոյն Դուռն և խիստ շփոթութեան մէջ է ընկեր, զգալով որ քննիչ յանձնաժողովին իւր նախապաշեալ հրահանգներ 'ի դերև պիտի ելնեն:

Ս. Մ.

Պոլիս, Յունվարի 2:

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՈՒՇ, դեկտ. 20.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Հարստութիւնը, որ այլ աշխարհների բարգաւաճման առաջի միջոց և պայման կարող է համարուիլ, այստեղ, Տաճկա-Հայաստանում, նըւաղման և կորստեան էական դերն ունի: Հարուստ ես, անշուշտ յեղափոխական ես, իսկ յեղափոխականի մը կայք ու գոյքը արժան չէ նորա վայելչութեան: Ուսումն ու գիտութիւնը, որ այլ աշխարհների ուրդոց առաջի պարծանաց սպասն է, այստեղ, Տաճկա-Հայաստանի մէջ, պատիժ ու պատուհասների միակ աղբիւր, ուր տեղից միշտ կը բղխի թշուառութիւն ու մահ... Կարդացող մ' հերիք է որ նա ճանաչուի «վարժապետ» անուան տակ, անշուշտ նա հակակիր կը ճանաչուի դէպի հագմուսուլմանէմը, հետևապէս արժան է նորա կորուստ: Նորաձևութիւնը, տարազամուծութիւնը որ ուրիշ երկրի ազգաբնակութեան մը համար յառգուած է որպէս ճաշակի զարգացման առաջին նշաններ, այստեղ, Տաճկա Հայաստանում, տանջանաց քուրա է, որովհետև նորաձևութեան սիրահարը իւր նոր զգեստով կ'անարգէ օսմանեան աւանդական փաթաթոցներ: Գեղեցկութիւն՝ իգական և արական մանրիկ դասի-վերաբերմամբ՝ որ անշուշտ բանական անհատի մը համար միակ հոգեկան ուրախութեան սրբտազուարճութեան նեցուկներ կարող են լինել, այստեղ, Տաճկա-Հայաստանում, սգոյ ու շիւանի, ապերջանկութեան ու մահուան հիմնական մեր կարող են համարուիլ, որոնց վրայ պիտի բարձրանան ազգի-ազգի տառապանքների նորանոր փաթթորկներ, որովհետև գեղեցիկը մը միայն արժան է հանդերձեալ հիւբինների կառավարիչ մուսուլմանի մը:

Անշուշտ յեղափոխականներ էին յայտնի հարուստ Մշու քաղաքացի Միրջանեանք, Բոէեանք, Փափազեան եղբարք՝ Ղազար և Կիրակոս, Ստեփան աղան, Պօղոսեանց երեք եղբայրներ, Գաւառեան Յօհան. Նաև յեղափոխականներ էին Ս. Յովհաննու վանքի Մկրտիչ վարդապետ, Ս. Կարապետի յանկլաղասի Ջաքար և ուրիշ տասնեակ անձինք, որոնք մի քանի ամսուայ բանտարկութիւն! ց յետոյ, այսինքն մինչև նոցա չքաւորուիլը, առանց դատավարութեան անպարտ դուրս եկան և արձակուեցան բանտից:

Հայազնի սիրոյն ու գգուանքին արժանի չէին Մշոյ քաղաքացի Բաբաջանեանի Ասատուրի գեղանի դուստրը: Հացեկ գիւղի ռէյս Թօբէի հրեշտակատիպ նորատարակ հարս, դեղձկունհի Աղջանցին և ոչ ալ Քըրդագոմ գիւղի քահանայի սիրունատեսիլ հարսը, որ յայտնի համարձակ Ամլայի Թելոյի Կակոյի լամուկը բըռնութեամբ առևանգեց և միւս տաբաբաղդուհիների հետ միասին Մշոյ մէջ, միւթէսէրրիֆ փաշայի ներկայութեամբ, հին մզկիթում՝ ի նշան մահմեդական կրօնի՝ թլփատութեան ու քէփինութեան (պսակի) ծէս կատարեց գարշելի շէյխ Հաճի-Դայիպ և մի այլ քանի շէյխ ու սօֆիների ընկերակցութեամբ:

Ահա այսպէս է մեր աշխարհի օրէնքը,—եթէ նա լոկ անիրաւութեանց արտայայտիչ չէ—մեր կեանքի շրջանակը և մեր կենցաղավարութեան պայմանները...

Մշեցի:

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐՍ, 31-ն դեկտեմբերի.

«Այլ առակ լուարուք»

Կարդալով «Արձագանքի» 149 համարը, ուր զետեղուած էր Թիֆլիզի Օսմանեան պ. հիւպատոսի մի պաշտօնական հերքումը ընդդէմ «Արձագանքի» մէջ լոյս տեսած Կարնոյ յօդուածի, շատ էլ չզարմացանք, որովհետև ամենքի հետ մենք էլ համոզուած ենք թէ՝ օսմ. կառավարութիւնը՝ իւր ներկայացուցիչ պաշտօնեաներով հանդերձ՝ ճշմարտութեան փոխարէն ընդ միշտ անճշդութիւնն է յառաջ քաշել և պաշտպանել, կատարուած իրողութիւնները յեղաշրջել և կեղծել նորա համար մի ժառանգական սիստ է դարձեր: Այսուամենայնիւ դարձեալ չենք կարող զըսպել մեր արդարացի բողոքը, տեսնելով և կարդալով շինծու լուրեր այն դէպքերի առթիւ, որոնց կատարուած ժամանակ մենք անձամբ եղեր ենք Տաճկա Հայաստան:

Այժմ չգիտենք արդարև օսմանեան կառավարութեան ներկայացուցիչ պ. հիւպատոսը անգիտութեամբ թէ միամիտ ձևանալով Կարնոյ թղթակցութեան մէջ յիշատակուած իւր բարբարոսութեամբ ընդհանուր Մշեցոց յայտնի գազան հաճի Փէյմ աղայի (և ոչ Հաճի Բեհեր, ինչպէս գրել է նա) գործ դրած քստմնելի դէպքը յանդգնէրէ վերագրել թէ շփոթել մի բոլորովին այլ դէպքի հետ, որ ժամանակագրական թուականով իսկ կէս տարիէն (93 դեկտ. 8—94 մայիսի վերջերք) աւելի միջոց է անցեր: Գալով դէպքա վայրերին, պ. հիւպատոսի ասած՝ տեղէն միւսը ուղիղ 14 ժամուայ հեռաւորութեան վրայ կը գտնուի: Գիւղերէն միւսոն գայմագամ կը նստի, իսկ միւսը հասարակ գիւղ է:

Հաճի-Փէյմի բարբարոսութիւններ, ինչպէս ճիշդ նկարագրուած էր «Արձագանքի» Կարինէն ստացած նամակի մէջ, տեղի է ունեցեր ներկայ տարուայս մայիսի սկզբներին Մուշ քաղաքի հիւսիսային կողմ, մէկ ժամ հեռաւորութեամբ Ջրէկ հայաբնակ գիւղի մէջ, Զունոյ Մխէեան յայտնի օջաղին պատկանող գեղատեսիլ Շողիկ հարսի առիթով: Այդ դէպքը գիտեն Մշոյ աշխարհի հայ, թուրք, քիւրդ և միւս ազգաբնակութիւններ: Ջրէկը՝ չարձանագրած Ալատին բէկի տարաբէկութեան նախապատմական օրեր, որքան գիտենք, ոչ թէ միայն գայմագամանիստ, այլ ամենահասարակ պաշտօնանիստ անգամ չէ եղած, ինչպէս [illegible] բառով ուզեցեր է աղաւաղել պ. հիւպատոսը: Գալով պ. հիւպատոսի ակնարկած Ջրէկի էֆէնտու դէպքին, արդարև չենք կարող և այդ առթիւ չյայտնել նորան մեր խորին շնորհակալութիւնը, որ այսօր մի պաշտօնական առանձին գրութեամբ ի լոյս աշխարհ կը հանէ մի բոլորովին այլ նախճիր արարքի աղօտ պատկեր, որ ցարդ անգամ անյայտ ու թաղնուած է եղեր:

Ահա այսօր՝ շնորհիւ այդ ինքնաբեբաբար հանգամանքին առիթ կ'ունենանք այստեղ, «Արձագանքի» էջերում յառաջ բերել այդ անցքի լոկ ուրուականը, որ տասնեակ անմեղ ընտանիքների սարսափելի դժբաղդութեան պատճառ դարձաւ...

Պ. հիւպատոսի Ջրէկի էֆէնտին կը բնակէր Պուլանըգ գաւառի Կոփ գիւղ, Բարոյեանց Գրիգորեան Առաքելի հիւրասենեակի մէջ, որ Մուշէն, այլ և Ջրէկ գիւղէն ուղիղ 14 ժամուայ հեռաւորութեան վրայ կը գտնուի, և ոչ թէ Ջրէկ և ոչ ալ ցարդ անյայտ եղող Քերոբէ տան մէջ, ինչպէս կը ճգնի ցոյց տալ պ. հիւպատոս, մանաւանդ որ «Քերովբ» անուն գոյութիւն չունի անգամ Ջրէկի անուան գիւղ գնացած գերդաստանի մէջ.

Այդ Ջրէկի էֆէնտին անցեալ 1893-ի նոյեմբերի սկզբներին նախահանդակ (մարդահամար անել, ստուգել) մամուռ-պաշտօնով շրջագայութեան կելնէ Պուլանըգ գաւառի մէջ: Իւր շրջագայութիւնը կատարելէն յետոյ երբ նոյն թըռականի դեկտ. ամսոյ ուղիղ 8-ին, ուրբաթ օրը, իրիկնադէմին (արդէն խստաշունչ ձմեռ էր) կը վերադառնայ իր բնակարան, անմիջապէս կը հրամայէ ծառային բանալ իւր բացակայութեամբ փակուած դուռն ու պատուհաններ և լաւ վառել:

Ծառան ցան ու աճարով կը վառէ բուխարին: Ընթրելէն յետոյ կը հրամայէ պինդ փակել դեռ ևս չհանգած կրակով բուխարու երդիս, սենեակի պատուհաններ և դուռը, այն ցանկութեամբ որ հնար լինի քրտնիլ և ամիս ու կէսուայ խոնջացած կազմուածքը կազդուրել:

Առաւօտեան, որոշեալ պահուն, երբ ծառան կուգայ իւր սպասաւորութիւններ կատարելու, կը գտնէ բնակարանի դուռ ու պատուհաններ պինդ փակուած: Մի քանի անգամ դուռ կը բաղխէ, ապա կը ձայնէ, սակայն ոչ ձայն և ոչ ևս ծպտուն կը լսուի սենեակի խորքէն: Կը դիմէ Ջրէկի էֆէնտու հօրեղբօր որդի յիւնապետ Սատուլլայ էֆէնտուն, որ նոյնպէս այդտեղ (գիւղ) կը բնակէր: Սատուլլան անմիջապէս կը փութայ հրաւիրուած վայր: Շրջակայ բազմութիւնն ևս տեսնելով Սատուլլայի այդ արտասովոր վազումը իրանք ևս կը փութան նորա ետևէն: Բազմութիւնն՝ Սատուլլայով հանդերձ՝ նախ կսկսի դուռն ու պատուհաններ բաղխել, ձայներ ու ճչեր արձակել, սակայն երբ կը տեսնեն որ ամեն մի նշանը մեռելութիւն կը փչէ, կը վճռին խորտակել սենեակի դուռը և ներս խուժել: Եւ ինչ. արդարև կը տեսնեն որ Ջրէկին՝ իւր անկողնոյ մէջ՝ ընկած է անշնչացած: Պաշտօնական քննութեան համար անմիջապէս կը հրաւիրուեն տեղւոյն գայմագամ էֆէնտին, դադին, մուֆթին՝ իւրեանց միւս գործակից պաշտօնեաներով, տեղւոյն զինուորական թուրք բժիշկ, կողմնակի համբաւաւոր շէյխեր և ուրիշ յայտնի անձնաւորութիւններ: Բժիշկը՝ ի ներկայութեան պաշտօնական և այլ հազարաւոր հանդիսականների քննութեան առնելով անշնչացած Ջրէկու մարմինը, կը գտնէ որ նա զոհ է գնացեր դեռ չը հանգած կրակի ծուխին ու հոտին:

Եւ այդ քննութեան հիման վրայ ևս բափորթ կուտայ:

Բափորթի զօրութեամբ եղելութիւնը անմիջապէս կը հեռագրուի Մշոյ միւթէսէրէֆին և նորանից ստացած պատասխանով՝ ըստ պատշաճի յուղարկաւորութեամբ, կը թաղուի այդ գիւղի թուրք գերեզմանոցի մէջ:

Կառավարութեան գարշելի պաշտօնեաներ՝ ի մեծ ցաւ իրանց՝ երբ կը տեսնեն որ մի այդպիսի [illegible] դէպք վեր ջացաւ առանց կաշառքի և մեծաքանակ ծախսերի, կը յաջողեն համոզել յիւնապետ Սատուլլայ էֆէնդուն, որ այդ աստիճան թոյլ չտնուի եղած առիթը ձեռքէ փախցնելու՝ ուր կը լինի նաև Ջրէկու յիշատակի զուր կորուստ: Սատուլլան՝ իւրայիններին խորհրդակցութեամբ՝ կ'առնէ իւր հրամանատարութեան ներքոյ գտնուած մի քանի ոստիկաններ, նոյնպէս իւր բարբարոսութեամբ, կաշառակերութեամբ և հայատեցութեամբ բազմաց յայտնի փոխ-գայմագամ Խալիլ էֆէնդուն և դէպքէն մի օր յետոյ, շաբաթ, լոյս կիւրակէ գիշեր, յարձակում կը գործէ Ջրէքու բնակարանատէր Բարոյեանց Գրիգորեան Առաքելի տան վրայ, և առանց մեղքանալու քնաթաթախ կանանց և երեխայոց լալ-պաղատանքին՝ կը ձերբակալէ տան աւագ անդամ Առաքելին, նորա մօր, կնոջ, հարսին, նորա եղբայր Յօհանին. հօրեղբայր Յակոբին և՝ սարսափելի հարուածների տակ, հայհոյութիւններով կը լեցնեն նախ փոխ-գայմագամի տուն և ապա մահամերձ ջախջախուած վիճակով ջոկ-ջոկ և գիշերուայ շորերով կը բանտարկեն մի ցուրտ և խարխուլ բնակարանի մէջ. Նոյն օրուայ առաւօտեան բացի դոցանէ՝ կը ձերբակալեն նաև Առաքելի մերձաւոր ու հեռաւոր ազգականներէն ութ բնիկ կոբեցի անձինք և դէպքի գիշեր Առաքելի թաղայի սաքուն (հիւրանոց) որպէս հիւր գտնուած Ատկոն գիւղացի հինգ հայ գիւղացիներ ևս, որոնք մի քանի օր առաջ յատկապէս կանչուած են եղեր իրանց գիւղի գործերի համար: Այս բոլոր ձեռնարկած ապօրինի անլուր անգթութիւններէն յետոյ ապա Սատուլլայ էֆէնդին կը ներկայացնէ տեղւոյն կառավարութեան իւր նախամտածած բողոք աղերսագիրը այս բովանդակութեամբ. «Ջրէքին ոչ թէ ծխահեղձ այլ բթախեղդ է եղած.» և յանուն մուսուլմանութեան կը խնդրէ արդարապէս քննութիւն: Նոյնպէս, այն կառավարութեանը կը խնդրուի, որի փոխ-ներկայացուցիչը Սատուլլայի գազանութեանց սատարն էր:

Կառավարութիւնը՝ անսալով Սատուլլային (և ինչպէս յանսար փոխ-գայմագամին՝ որպաշ թևն էր Սատուլլային), միւսեւթեան կը դատապարտէ իւր նախնական արած քննութեան արդիւնքը և Ջրէկի թաղումէն երեք օր յետոյ, այն ևս մէջ գիշերին միայն, կը կարգադրէ գերեզմանէն դուրս բերել նորա դիակը և մի քանի տեղերից ջարդելով ներկայացնել կառավարութեան: Այդպէս ալ եղաւ: Նախամտածեալ խորհրդով նախկին բժշկի փոխարէն բերուեցաւ այս անգամ Մանազկերտ-բերդի զինուորական բժիշկը, որ կոբէն 4 ժամ հեռաւորութեան վրայ կը գտնուի: Նոր հրաւիրուող բժիշկը արդարև՝ հակառակ իւր դասանակից ու պաշտօնակից բժշկի տուած վկայութեան՝ մի նոր առանձին բափորթով կը վկայէ թէ՝ «Ջրէքին ոչ թէ ծխահեղձ է, ինչպէս այդպէս վկայեր է նախորդ բժիշկ, այլ սպանուած, այն ևս բթախեղդութեամբ ու անողոք գանակոծութեամբ:» Երբ պաշտօնէից այդ նոր արդիւնքը տեղեկագրուեց Մշոյ միւթէսէրիֆին՝ հակառակ նորա յայտնած զարմանքին՝ գործի այդ կերպ յեղաշրջման առթիւ, ձերբակալուած արք և կանայք ձմեռուայ այդ սառնամանի եղանակին, շղթայակապ տանջանքներով՝ միւթէսէրիֆէն կանչուեցան Մուշ և բանտարկուեցան կենդրոնական բանտի մէջ, միւթէսէրիֆի քթի տակ...

Ահա այդ սխրագործութիւնից ցարդ արդէն բոլորուեցաւ ու անցաւ մի տարի անգամ (և ով գիտէ դեռ քանի տարիներ ևս պիտի գան ու անցնեն) և դեռ նոցանէ Մշոյ բանտի խաւարչտին նկուղների մէջ, ծանր շղթաների տակ կը տանջուին Առաքել, նորա կին, նորա եղբայր Յօհան ու հօրեղբայր Յակոբ և Ատկոնցիք:

Աւելացնենք սորա վրայ և պ. հիւպատոսի յայտնած այն հիմնովին անճշտութիւնը թէ Ջրէքու հետ միասին է եղեր և Հաճի-Թէհիմ (Հաճի-Փէյմ հերոս): Արդարութիւն կը պահանջէ ասել, որ Ջրէքին բոլորովին միայնակ է եղեր և՝ որքան մեզ յայտնի է, Հաճի-Փէյմ 10 տարիէն աւելի է, որ Պուլանըգ գաւառի մէջ ոտք դրած չէ, հետևապէս և Կոբ գիւղում: Իսկ ինչ կը վերաբերի այդ բազմաչարչար եղկելիների նիւթական կրած վնասի ու աւերածութեան մասին, կը բաւէ միայն ասել, որ Բարոյեանց երբեմն հացալի և ճոխ սեղանի միւս զաւակունքը այսօր՝ օրուայ հացին կարօտ մնալով՝ ցիր ու ցան եղան մահաշունչ պանդխտավայրեր մի պատառ չոր հացի փշրանք ձեռք բերելու համար...

Ահա թէ ուր է ոտնատակ եղած ճըշմարտութիւնը, իրաւունքը և պարտքը և ուր՝ միևնոյն ժամանակ՝ բարձր ի գլուխ յաղթանակած է սուտն ու կեղծիքը, անարդարութիւնն ու անվերջ անիրաւութիւնը...

Խնդրեմ, մեծայարգ պարոն Խմբագրապետ, յանուն ոտնահարուած ճըշմարտութեան, թոյլ տաք ներկայ գրութեանս հիւրընկալուելու «Արձագանք» լրագրոյ մի անկիւնի մէջ:

Զ—ն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՐԳԻՆԱ

(Ժողովրդական աւանդութիւն)

Աւետարանի փրկարար լոյսը լրիւ 10 դար կամ 1000 տարի էր բոլորուել որ տարածուել էր տիեզերքի վրայ. 10 դար առաջ սիրոյ, ճշմարտութեան և խաղաղութեան մարմնացած գաղափարը, Ինքը՝ աշխարհի Փրկիչը, չարաչար հալածուեց անարդարութեան, արծաթասիրութեան և բռնութեան ձեռօք. փարիսեցիների և օրինականների դատաստանն անարգ խաչի վրայ բևեռեց և ճգնեցաւ յաւիտեանս գերեզման իջեցնել Նրան...սակայն ահա Նա, որ մարմին և հոգի հագած՝ շրջում է աշխահիս երեսին և Իւր խաղաղոնով հալածում է բռնութիւնն ու անարդարութիւնը...

Հայոց Շահանշահ Աշոտ Բագրատունին այդ իսկ ժամանակ հիմնարկում էր մեծածախ, ճոխ և փառաւոր, Նաև հրաշակերտ, Անի Մայրաքաղաքի շինութիւնը, Փրկչի հազարամեայ յոբելեանին իբրև մշտնջենական յիշատակ նուիրելու, ընծայում էր Նրան Աստուածային խնամածութիւնը, յատուկ ցանկութեամբ, որ 1001 թուին Քրիստոսի, Զատկական հրաշափառ Յարութեան տօնին՝ 1001 տաճարներում, հայ կղերը 1001 պատարագ պէտք է մատուցանէր:

Խաչիկ երանելի հայրապետն էլ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, իւր խորանն էր կանգնեցնում Երազգաւորս կամ Ծիրակաւանի մօտ, այժմեան Արգինա գիւղում, որի մինչև երկինք բարձրացող հրաշակերտ կաթողիկէն, Անիի Մայր կամ Տիրամօր եկեղեցու նման՝ իւր աննման-ճարտարարուեստ կազմութեամբ, գողտրիկ մանուածներով, մանրիկ մօզաիկներով ու մանրանկար քանդակներով Հայաստան աշխարհի ժամանակակից հրաշալիքների մէկն էր համարւում...

Վարդավառի տօնի նախընթաց օրն էր: Տրդատ ճարտարապետի վերահսկողութեան ներքև, ջանասէր մշակների նըման՝ անհանգիստ և անդադրում աշխատում էին վարպետներն ու մշակները նոյն օրը ևեթ աւարտելու կաթողիկէի վերին մասը և կանգնելու այնտեղ մարդաչափ արծաթածոյլ խաչը, որ նուիրել էր Խոսրովադուխտ հայոց բարեպաշտ և երջանիկ թագուհին, սակայն հրեղէն գունդը թեքուել էր դէպի արևմուտք, ժամանակը երեկոյանում էր և հանրահռչակ ճարտարապետը տարակուսում էր նոյն օրն աւարտել շինութեան գործը և կանգնել փրկարար խաչը:

—Հայր սուրբ, եկեղեցու օծումը պէտք է յետաձգել մինչև Նաւասարդ՝ Տիրամօր վերափոխման տօնին. այսօր անհնարին է աւարտել. արևն արդէն խոնարհել է դէպի մայր,—Ամենայն ակնածութեամբ արտաբերեց շնորհալի ճարտարապետը:

—Ո՛չ, սիրելի որդեակ Տրդատ, ոչ մի կերպ չեմ կարող յետաձգել օծումը. վաղուան համար հրաւէր է կարդացուած և արդէն խմբուած է այստեղ բարեպաշտ ժողովուրդը. այս գիշեր պէտք է ժամանեն՝ արքայական ընտանիքը, աւագանիքը, նախարարներն ու ազատները...աշխատեցէք, աճապարեցէք, իմ հաւատը մեծ է, Նա անտարակոյս պիտի օգնէ ձեզ աներևութապէս,—բուռն հաւատով և հաստատուն յոյսով մակաբերեց ժողովրդի հոգևոր հայրը, որ յամրաքայլ շրջելով խորանի չորս կողմը՝ աղօթում, սաղմոս էր մրմնջում և ստէպ ստէպ օրհնում ու քաջալերում էր ջերմեռանդ աշխատաւորներին:

—Այսօր չի վերջանալ շինութիւնը. դեռ խաչի պատուանդանն ու խնձորը բոլորելու երկար միջոց է հարկաւոր...—աղմկեցին վարդապետներն ու մշակները:

—Մի՛ թերահաւատիք, սիրելի որդիք. Ամենակարողն Աստուած աջակից է ձեզ. Նրա կամքն է այսօր իսկ աւարտել Իւր Տան շինութեան գործը...—լի հաւատով կրկնեց ալեզարդ Հայրապետը:

—Բայց ժամանակը չի կանգնում, արևը վաղուց թեքուել է դէպի մայր. երեկոյանում է..

—Թո՛ղ կանգնի արևը. Նա էլ պարտական է նպաստել իւր Արարչի ամենասուրբ անունով ձեռնարկուած գործի յաջողութեանը... — հազիւ թէ երջանիկ Հայրապետն արտասանեց, երբ հրեղէն գունդն անշարժ կանգ առաւ իւր տեղում:

—Օրհնեա՜լ է Աստուած,—ասաց քահանայապետը:

—Օրհնեա՜լ է Լուսաւորչի հաւատը,—ձայնակցեց ամբոխը:

Տարօրինակ եռանդով շարունակուեց հաւատով սկսուած և հրաշքով աւարտուած գործը: Հնչեց երկաթի կոչնակը, կատարուեց փառաբանական օրհներգն ու քաղցրաբարբառ մեղեդին:

—Տեսէ՛ք, սուրբ Հայր, Աստուածային տաճարի գագաթին փողփողում է արդէն Տէրունի խաչը: Ձեր սուրբ օրհնութեամբ լրացրինք մեր գործը,—ծնկաչոք համբուրելով Հայրապետի աջը՝ առանձին բերկրութեամբ աւետեց Տրդատը:

—Ուրեմն արևն էլ կատարեց իւր պաշտօնը:—Եւ դառնալով դէպի արևակը՝ շարժեց իւր մոմեղէն սուրբ ձեռը ասելով՝—Սրի-գնա:

Այն օրից էլ յիշեալ գիւղաքաղաքը անուանեցաւ՝

«Սրի գնա» կամ «Արգինա».

Կրպէ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ. - Լրագիրները հաղորդում են որ Կազիմիր Պերիէն պաշտօնից հրաժարուել է զիջանելով իւր կնոջ և մօր աղաչանքներին: Նոր նախագահի՝ Փօրի ընտրութիւնը վերջացել է կատարեալ սկանդալով: Երբ ատենապետը յայտնեց թէ նախագահ

է ընտրուած Ֆորը, ասաց՝ն լսուպէում ամենքը զարմացան, յետոյ աջ կողմում լսուեցին ծափահարութիւններ, իսկ սօցիալիստների և արմատականների կուսակցութիւնը ասպարէզ աղաղակ բարձրացրին «Թող կորչեն գողերը, Նրանց Մազաս պէտք է ուղարկել»: Արմատականները և սօցիալիստները դոռում էին՝ «կեցցէ Բրիսսօն» և նրանց ցոյցեր էին անում: Երբ ընտրութիւնը վերջացաւ և Ֆորը դուրս եկաւ, ֆրանսիացիք նրան ընդունեցին առաջ սառն, բայց յետոյ աճագին ամբոխ շրջապատեց Վերսալ և շար ընակ աղաղակում էին կեցցէ Ֆորը: Նոր նախագահի արտաքինը շատ գրաւիչ է և ինչպէս երևում է գլէր է եկել շատերին, այնու ամենայնիւ այժմ աւելի «կեցցէ Բրիսսօն» են աղաղակում քան «կեցցէ Ֆոր»:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Յունվարի 11-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Թագաւոր Կայսրը իր և Նորին Մեծութեան Թագուհու պսակադրութեան առթիւ բարեհաճեց յատկացնել 10 հազար ռուբլի որ բաժանուի այն աղքատ հարսնացուներին, որոնք նշանուած են և մարդու գնացած սկսեալ 1894 թուի նոյեմբերի 14-ից, մինչև 1895 թուի նոյեմբերի 14-ը:

ՍՕՖԻԱ.— Վեննայի կաբինետը բողոքեց նոր ակցիզների դէմ. Նաչէվիչը երկու հաղորդագրութիւններով խնդրում է յետ վերցնել բողոքը, գանգատվում է այդ մանրակրկիտ վարմունքի դէմ և յայտարարում է որ եթէ Աւստրո-Վենգրիան պնդի իր ասածի վրայ, Ստոիլովի նախարարութիւնը հրաժարական կը տայ:

ՓԱՐԻԶ.— Ֆորը հանձնեց Բուրժուային փորձել նախարարութիւն կազմել:

ԱԹԷՆՔ.— Նախարարութիւնը հրաժարական տուաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— «Նովոյէ Վրեմեան» հաղորդում է, որ ելևմտից նախարարութիւնը վճռել է միջնորդել, որ մանաւանդ առևտրական դպրոցներին նպաստ տրուի տարեկան իւրաքանչիւրին 100,000 ռուբլի:

ԺԻՏՈՄԻՐ.— Սոֆիայից ստացուած տեղեկութիւններին նայելով Ստամբուլովն աշխատում է միանալ ցանկովիստների հետ, որ կարելի կը լինի միացեալ ույժերով Կոբուրգ իշխանին հեռացնել Բուլղարիայից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Յունվարի 10-ից.

Վեքսէլի կուրս 3 ամսով:	
Լօնդօնի վրայ 10 Ֆ. ստ.	93
Բերլինի վրայ 100 մարկ	—
Փարիզի վրայ 100 Ֆր.	36,85
Նոր կտրած պօլուիմպերիալներ	7,39½ գն. 7,43 վաճ.
Բօրսայի զեղչը	5-ից 7
4½ Պետակ. արժեթղթ.	95,62½
5% ոսկ. արժեթ. 1894 թ.	162,50
5% Առաջ. ներքին փոխ. խաղատոմս 1864 թ.	231
5% Երկր. ներք. փոխառ. խաղատոմս 1866 թ.	227,25
5% Ազնուակ. հող. բանկի գրաւակ. խաղատոմս	207
5% Պետակ. երկաթուղ. արժեթուղթ	101,62½
4% Ներքին փոխ. I սեր.	95,62½
„ „ „ II „	95,62½
„ „ „ III „	95,62½
„ „ „ IV „	95,62½
4⅓% փոխ. 1893 թուի	101,62½
„ փոխ. 1 հրատարակ.	101,50
„ փոխ. 2 հրատարակ.	101,50
4½% Գրաւակ. արժեթղ. ազն. հողային բանկի	101,37
4½% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր	101,25½
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	101
„ „ Մոսկուայի	100,25
5½% Օդեսայի	100,25½
5% Թիֆլիզի	98 գնողներ
5% Գրաւակ. արժթ. հող. բանկերի Խարկովի	100,25
„ Պոլտավայի	99,87½
„ Տուլայի	100,25½
„ Կիևի	100,50
„ Մոսկուայի	100,62
„ Բեսարաբիայի	99,75½
„ Ներքին-Սամարայի	100,25½
„ Դոնսկոյ	99,50½
„ Վիլենսկի	99,87½
6% և 5% Քութայիսի	101,98,75 գնողներ
„ Թիֆլիզի	101,98,50 գնողներ

ՋԱՆԱՁԱՆ

Թիֆլիզի քաղաքային դպրոցի ուսուցիչ Ի. Պ. Կուպչէնկօն հաղորդում է իրեն խնամքին յանձնուած դպրոցի աշակերտներից մէկի յանկարծակի համրանալու տարօրինակ դէպքը. „Արդեօք բժշկների ու շողրութեան արժանի չէ—ասում է պ. Կուպչէնկօն, հետևեալ դէպքը:—Թիֆլիզի քաղաքային դպրոցի առաջին դասարանի աշակերտ Միքայէլ Աւալթանաշվիլին ամսոյս 9-ին առաւօտեան քնից զարթնելով բոլորովին կորցրել է խօսելու ընդունակութիւնը և շրջապատողների հետ միայն նշաններով է կարողանում խօսել: Երբ նրան բերին դպրոց և հարց ու փորձ արին այդ առթիւ, նա հետևեալ գրաւոր բացատրութիւնը տուաւ. „Երազում ես մի մարդ տեսայ, որ իմ երեսիս խփեց և ասաց թէ ես երեք ամիս չպիտի խօսեմ, այդ մարդը ձեռին բռնած ունէր նիզակ և նստած էր սպիտակ ձիու վրայ:“

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԲԺԻՇԿՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների:

Ա. Մ. ՉԻՆՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ս. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½, ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ս. Գ. ԳԱՍՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն.

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցումը ընդունւում են և ԳԻՇԵՐԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ Նաւասարդեան.

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

ԲԺՇԿ. ԴՈԿՏՈՐ

ԱԻԵՏԻՔ ԲԵԲՈՒՅԵԱՆԻ

Սոլօլակ, Սերգիևսկի փողոց № 14

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, և ԷԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթօդներ:

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը — կինարմատներ և երեխաներ

1½—2 ըժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան — տղամարդիկ:

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասսաժաող կին և մասսաժիստ պարոն:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երթևեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին).

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. [illegible] — Ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր:

Կ. Ա. [illegible]—Ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր:

Գ. Գ. [illegible]—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր:

Ս. Ն. Լեւին—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր:

Մ. Ս. [illegible]—Ներքին և վեներական, ժ. 12—1 (երկ. չոր. և շաբ. օր.)

Ո. Գ. [illegible]—ականջի, կոկորդի և քթի, ժ. 9—10 ամեն օր, բացի հինգշաբթի օրուանից:

Կին-բժ. Մ. Ա. [illegible]—կանանց ժ. 9—11 ամեն օր:

Ն. Դ. [illegible] — Ներքին և երեխանց, ժամը 12—1 ամեն օր:

Կին-բժ. Լ. Ե. [illegible]—կանանց, ժամը 11—12 ամեն օր:

Ե. Ս. [illegible] — Ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր:

Մ. Ս. [illegible]—Ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր:

Դ. Ն. [illegible]—Ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 11—12 ամեն օր:

Գ. Ս. Թարխանեան — ներքին և խիրուրգ., ժ. 11—12 ամեն օր:

Կին-բժ. Ս. Ս. [illegible]—աչքի և կանանց, ժամը 11—12 ամեն օր:

Ատամ. բժ. Ա. Օ. Օրբէլի—ատամներ, ժամը 10—11 ամեն օր:

Կոնսուլտացիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղիկ պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրեր, ժամը 9—1:

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆՔ

(Կախեթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ս. [illegible]—ժամը 11—12 ամեն օր:

Կին-բժ. Մ. Ս. [illegible]—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը:

ԽԱՐՓՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Բանկիա փողոց, տ. Ենֆիաճեանի)

Գ. Բ. Տէր [illegible]—ժամը 11—12 ամեն օր:

Կին-բժ. Մ. Ա. [illegible]—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը:

[illegible].— Զքաւոր անձերին բժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի:

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝— Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊՕՏՏՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան.

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 9 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 9 և 50 րոպ.-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 8 և 50 րոպէին երեկոյեան.

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը 6 ժամին 50 րոպ. երեկոյեան.

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին 25 րոպ. երեկոյեան.

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 6 ին և 40 րոպէին երեկոյեան.

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը 8 ժամին 26 րոպէին երեկոյեան.

Նամառուան գնացքը Թիֆլիզից Միխայլով դուրս է գնում ճաշից յետոյ 3 ժամին և հասնում է Միխայլովօ երեկոյեան 7 ժ. 15 ր.:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.:

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.:

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 12-ին 25 ր.:

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.:

ՌՈՒՍՈՒՑ ՇՈԳԵՆԱՒՈՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև:

Բաթումից դուրս է գնում.

Տարամ օրերը (լոյս կիրակի գիշերուա 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 11½-ին, խուճապ ընթացքով Եւպատորի և Սևաստոպոլի վրայով.

Երեքշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ ժամը 2-ին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Միխայլովիցից Թիֆլիզ՝ դուրս է գալիս գիշերուայ 1 ժ. 30 րոպէին և հասնում է Թիֆլիզ առաւօտեան 8 ժ. 15 ր.

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժամին 27 ր., հասնում է Գանձակ 7 ժ. 35 ր. առաւօտեան.

Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժ., հասնում առաւօտեան 7 ժ. 40 րոպէին.

Հինգշաբթի օրերը ցերեկուայ ժամը 12-ին ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով.

Կ. Պոլիս երկու շաբաթը մէկ անգամ երեկոյեան ժամը 7-ին.

Բաթում է հասնում.

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով:

Ուրբաթ օրերը առաւօտեան, խճուղու ընթացքով Սևաստոպոլի վրայով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅՈՑ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՓԹՎԱՆՈՒՄ

1886 թուին վարդան (Աղէքսանդրը) Գոլոշեանի նախաձեռնութեամբ Սալմաստի Հաֆթվան գիւղում հիմնուած է այս գրադարանը, Սալմաստի հայոց մէջ ընթերցանութիւն տարածելու համար. բայց հիմնադրի վաղահաս մահուան պատճառով երկար ժամանակ անունով միայն գոյութիւն ունեցաւ և գրասիրաց ընկերութիւնը, որ գրադարանին օգնելու նպատակով հաստատուած էր, տարիներով ոչ մի վճարող անդամ չունեցաւ: Միայն այս վերջի երկու տարին մի ցնցումով հոգեվարքի մօտ եղող գրասիրաց ընկերութիւնը նոր կենդանութիւն ստացաւ, անդամների թիւը 30—35-ի հասաւ և գրադարանի ցրուած գրքերից 280-ի չափ միայն կարելի եղաւ մի տեղ հաւաքել:

Այժմ գրադարանը 450 հատոր գիրք ունի և ստանում է Թիֆլիզից, Պոլսից և ուրիշ տեղերից 10 օրինակ լրագրներ և հանդէսներ: Անցեալ տարի ունեցաւ 780 դրան ելևմուտ, իսկ այս տարի յառաջադիմութիւնը էլ աւելի զգալի է:

Ներկայիս հրաւիրում ենք բոլոր հայ հեղինակներին, խմբագրներին և բարեսէր անձերին, որ իրենց օգնութիւնը չզլանան Սալմաստի հայոց այս միակ գրադարանին, որի ճոխացումն զգալի կերպով կը նպաստէ գաւառիս նոր սկսուող կրթական գործին:

Խնդրում ենք նուիրատուներին դիմել այս հասցէով՝ «Պարսկաստան, Սալմաստի գրադարանին Հաֆթվան»:

Սալմաստի Հաֆթվան գիւղի գրադարանի վարչական ժողովի՝

Քարտուղար՝ [illegible]:

Նախագահ՝ Գրիգոր Մ. Ղազարեան:

1—4

ԲԱԳՈՒԻՑ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ խնդրում է անցեալ 1894 թ. տարեկան անդամոց՝ նորոգել իրանց անդամակցութիւնը և ներկայ 1895 թուականի համար, վճարելով իրանց անդամակցական 5-ական ռուբլին ընկերութեան գանձապահ պ. Եղիշէ Նարաթեանցին: 5—1

„ԹԱՏՐՈՆ“

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԲԱՑՈՒԱԾ Է 1895 ԹՈՒԱԿԱՆԻ

Բաժանորդագրութիւնը:

Տարեկան բաժանորդագինն է 3 ռ., օտարաքաղաքացիների համար 3 ռ. 30 կ., արտասահմ. 10 Ֆր.

Թիֆլիզում բաժանորդագրութիւնն ընդունվում է հրատարակչի մօտ՝ Ստարո Ինստիտուտ. փողոց, № 4.

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն Тифлисъ, Александру Тарханьяну կամ Tiflis, Alexandre Tarkhanian

Հրատարակիչ՝ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ:

3—2

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

1895—Թ. ՏԱՐԻ

Կը հրատարակուի առաջիկայ տարին նոյն ծաւալով աւելի ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ:

«ԱՄՍՕՐԵԱՅ ՀԱՆԴԻՍԻ» տարեկան բաժանորդագինն է 10 Ֆրանք =4 ըբ. Թղթադրամ;—Կէս տարեկանը 6 Ֆր.=2 ր. 50 կոպ.:

«ՀԱՆԴԻՍԻ» բաժանորդ գրուիլ ցանկացողները դիմելու են կամ գործակալաց և կամ ուղղակի խմբագրութեան հետևեալ հասցէով.

A la Rédaction de la Revue «HANTESS» Au Couvent des RR. PP. Méchitharistes à

VIENNE (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՍՏԱՆԻՍԼԱՎ ՇԱՐԱԽՉԻԱՆՈՎԻ

Articles de Paris et Nouveautées. Stanislav Charakchianoff

Maison fondée en 1870

(Դվորցովայա փողոց, շտաբի հանդէպը)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՆՈՐԱՁԵՒ ԵՒ ԳԱԼԱՆՏԵՐԻԱՅԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ.—

ԿՈՐՍԵՏՆԵՐ 2 ռ. 50 կ.-ից սկսած: ԳԼԽԱՐԿՆԵՐ տղամարդկանց համար: ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ—անուշաբոյր օծանելիք՝ գլխաւոր գործարաններից: Ձեռնոցներ, գուլբաներ, հովանոցներ, ծաղիկներ, հովհարներ, ալբոմներ, նեսեսէրներ, պորտ-մօնէ: Բիւրեղեայ, յախճապակեայ զարդարանքի իրեղէններ: Վզեղ իրեր ընծաների համար, խաղալիք և տիկնիկներ:

Օտարաքաղաքացոց պատուէրները կատարվում են ամենայն ճշդութեամբ: (100—58)

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Օ. ՁԻԲԵՐՏԻ

(№ 7, Դվորցովայա փողոց, տ. Սարաջևի, № 7)

ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԻՍԿԱԿԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ

ԱՂՔՕՄՆԵՐ, ԻՐԵՂԷՆՆԵՐ ՓՂՈՍԿՐԻՑ, ԿԱՇՈՒՑ ԵՒ ՄԵԼԽԻՕՐԻՑ

(150—96)

„ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(Вѣнскій Магазинъ)

Ա. Խուդավերդեանի

Գոլովինսկի պրոսպ. վրայ, առ. գիմնազ. հանդէպ, Մղիվանիի տանը:

ՍՏԱՑԵԼ ԵՆՔ

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՅՈՑ

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ձմեռային և աշնանային սեզոնների համար: Գները այս տարի անհամեմատ աւելի աժան, քան անցեալ տարիները. Ծախում ենք ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ (безъ запроса): (25—18)

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՆ.—

		Ռ.	Կ.
1.	[illegible], Ֆրանկլին, 2 տիպ. սպառուած	—	—
2.	» Վաշինգտոն, 2 տիպ »	—	—
3.	» Հոմերի Իլիականը, պատկերներով	1	—
4.	» Հոմերի Ոդիսականը, »	1	20
5.	» Ուէյնեկէ աղուէսը,	—	60
6.	Սմայլս, Բնաւորութիւն	1	50
7.	» Ինքնօգնութիւն.	1	50
8.	Ամիչիս, Սիրտ	1	—
9.	» Ապէնինններից մինչև Անդէրը.	—	20
10.	» Ռուստեմ և Զոհրաբ	—	20
11.	Շիլլէր, Աւազակներ, ողբերգութիւն	—	50
12.	Տօլստոյ, Ռոբինզօն, փոքրերի համար	—	20
13.	» Կոլումբ, » »	—	15
14.	[illegible], Բէատրիչէ, վէպիկ	—	30
15.	» Նօնցայի բերդը, վէպիկ	—	30
16.	Վոլտէր, Հաւատարիմ Սավիտրին *)	—	10
17.	Իրվինգ, Մահմեդի կեանքը	1	20

ՇՈՒՏՈՎ ԿԸ ՏՊՈՒԻ

2. Դիքքէնս, Դաւիթ Կոպպէրֆիլդ, երեք հատոր, անգլիերէնից:

Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище, և կենդրոնական գրավաճառանոցում:

*) Տպագր. հրատարակչ. Ընկեր.